ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՄԱՆԴԱՏ ՍՏԱՑԱԾ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԸ ԿԱՍԵՑՎԵԼ ԵՆ

22.01.2019 13:10

Փաստաբաններ **Նիկոլայ Յուրիի Բաղդասարյանը** (արտոնագիր № 95), **Հերիքնազ Սարգսի Տիգրանյանը** (արտոնագիր № 618), **Աննա Սամվելի Կարապետյանը** (արտոնագիր № 2091) **Սուրեն Սամվելի Գրիգորյանը** (արտոնագիր № 2037), **Արթուր Ռազմիկի Դավթյանը** (արտոնագիր № 391), **Էդմոն Հրաչիկի Մարուքյանը** (արտոնագիր № 788) և **Տարոն Վարդանի Սիմոնյանը** (արտոնագիր № 1092) Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի 09.12.2018թ. արտահերթ ընտրություններում համապատասխան տարածքային և համապետական ընտրական ցուցակներով ընտրվել են 7-րդ գումարման ազգային ժողովի պատգամավոր, իսկ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի **04.01.2019թ. թիվ 1 արձանագրության** համաձայն գրանցվել են որպես ՀՀ ազգային ժողովի պատգամավոր և ստացել են մանդատ:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 21.01.2019 թվականի նիստում պատգամավորի ներկայացուցչական մանդատ ստացած վերոնշյալ փաստաբանների փաստաբանական գործունեության արտոնագրերի գործողությունը կասեցվել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, համաձայն որի՝ ***Փաստաբանի արտոնագրի գործողությունը կասեցվում է, եթե փաստաբանը ... ընտրվել է պետական ընտրովի մարմիններում, համայնքի ղեկավարի կամ ավագանու պաշտոնում՝ իր լիազորությունների ժամկետով:***

Նշված անձանց փաստաբանական գործունեության արտոնագրերի գործողությունը կասեցվել է Հայաստանի Հանրապետության 7-րդ գումարման ազգային ժողովի պատգամավորի լիազորությունների ժամկետով:

Նիկոլայ Յուրիի Բաղդասարյան

Հերիքնազ Սարգսի Տիգրանյան

Աննա Սամվելի Կարապետյան

Սուրեն Սամվելի Գրիգորյան

Արթուր Ռազմիկի Դավթյան

Էդմոն Հրաչիկի Մարուքյան

Տարոն Վարդանի Սիմոնյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })